ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 88

<19> 11 2011թ.

ք. Արտաշատ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 72-րդ հոդվածով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ մարտի 7-ի <<Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության Իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին>> N 281-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2012 թ. սեպտեմբերի 26-ի թիվ 01/17/4978-12 հանձնարարականը.

Որոշում եմ.

1. Ստեղծել աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմ /այսուհետ՝ ԱՌՆ մարզային թիմ/՝ ի պաշտոնե սկզբունքով, համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ԱՌՆ մարզային թիմի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Լիազորել ԱՌՆ մարզային թիմին.

1) ապահովելու նպաստավոր միջավայր՝ աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կառույցների համար՝

աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության և Հյոգոյի գործողությունների ծրագրի առավել արդյունավետ իրականացման նպատակով,

2) ներկայացնելու աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրները՝ աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմում, մասնակցային եղանակով որոշելու լուծման ճանապարհները և հետամուտ լինելու դրանց իրականացմանը,

3) նպաստելու և օժանդակելու աղետների ռիսկի նվազեցման գործառույթների իրականացմանը՝ մարզային և համայնքային մակարդակներում.

4. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

5. Ուժը կորցրած ճանաչել մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 31-ի <<Աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի կազմը հաստատելու մասին>> թիվ 79 որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի

2012 թվականի հունիսի 19-ի N88 որոշման

ԿԱԶՄ

Աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի

Թիմի ղեկավար՝

1. ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության պետ

Թիմի անդամներ՝

2. ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
3. ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
4. ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
5. ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
6. ՀՀ Արարատի մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
7. ՀՀ Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Աշխատակազմի ղեկավար՝ Ա. Վարդանյան

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի
2012 թվականի հունվ. 19 -ի N 88 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Աղետների ռիսկերի նվազեցման մարզային թիմի

Ընդհանուր դրույթներ

1. Աղետների ռիսկերի նվազեցման մարզային թիմը (այսուհետև թիմ) հանդիսանում է ՀՀ Արարատի մարզում ԱՌՆ ազգային ռազմավարության իրականացման ոլորտում համակարգող մարմին:

2. ԱՌՆ մարզային թիմին հաշվետու են մարզի համայնքային թիմերը:

3. Թիմն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ,սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

4. Թիմին կից՝ թիմի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:Անհրաժեշտության դեպքում թիմի աշխատանքներին կարող են ներգրավվել Հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների մասնագետներ և փորձագետներ:

II Հիմնական խնդիրները

5. Թիմի խնդիրներն են՝
   1) աջակցել աղետակայուն մարզ ձևավորելու գործընթացին, նպաստելով աղետների ռիսկի նվազեցման և անվտանգության մշակույթի ձևավորմանը.
   2) առաջնորդել մարզում ԱՌՆ գործընթացները.
   3) ԱՌՆ խնդիրների և առաջնահերթ լուծումների ձևավորում և առաջարկությունների ներկայացում.
   4) ԱՌՆ ուղղված գործողությունների և զարգացման պլանների կազմում և հաստատում.
   5) առաջնորդել մարզում ԱՌՆ ուղղված գործողություններում ընդգրկված կազմակերպությունների գործունեությունը.
   6) ԱՌՆ համայնքային թիմերի գործունեության համակարգում.

III Թիմի աշխատանքների կազմակերպում

6. Թիմը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

7. Թիմի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են կիսամյակը մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:
8. Թիմի նիստերն իրավազոր են թիմի անդամների առնվազն կեսից ավելի մասնակցության դեպքում:
9. Թիմի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է թիմի ղեկավարը:
10. Թիմը իր նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ:
11. Թիմի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայնով:
12. Թիմի որոշման վերաբերյալ թիմի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:
13. Թիմն ունի քարտուղար, որը արձանագրում է թիմի նիստերը և նախապատրաստում թիմի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

IV Թիմի ղեկավարը

14.Թիմի ղեկավարը՝

1) հրավիրում և վարում է թիմի նիստը: Իր բացակայության դեպքում թիմի ղեկավարի լիազորություններն իրականացնում է թիմի ղեկավարի տեղակալը.

2) ապահովում է թիմի բնականոն գործունեությունը.

3) թիմին է ներկայացնում նիստերի օրակարգերի նախագծերը.

4)համակարգում է թիմի աշխատանքը.

V Թիմի անդամները

15. Թիմի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. Թիմի քնարկմանը ներկայացնելու հարցեր,

բ. Ներկայացնելու թիմի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

գ. Ծանոթանալու նիստերի արձանագրություններին,

2) պարտավոր են՝

ա. մասնակցել թիմի աշխատանքներին,

բ. կատարել թիմի որոշումները, ղեկավարի հանձնարարականները,

VI Թիմի քարտուղարը

16. Թիմի քարտուղարը

1) ապահովում է թիմի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

2) կազմակերպում է թիմի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում միջոցառումների իրականացումը, թիմի նիստերի գումարման նախապատրաստման աշխատանքները.

3) Ապահովում է նիստերի արձանագրության կազմումը.

4) ապահովում է թիմի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

5) սահմանում է հսկողություն թիմի որոշումների իրականացման աշխատանքների նկատմամբ

6)թիմի ղեկավարին է ներկայացնում հաշվետվություն՝ իրականացված աշխատանքների մասին.

7) կազմակերպում է ԱՌՆ համայնքային թիմերից ստացվող նյութերի հավաքում, մշակում և ներկայացում թիմի քննարկմանը.

8) առաջարկություններ է ներկայացնում, ըստ ուղղությունների, աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ ԱՌՆ ոլորտում ի հայտ եկած հրատապ խնդիրների լուծման, ինչպես նաև հիմնական խնդիրների իրականացման համար: Աշխատանքային խմբերի կազմը հաստատում է թիմի նիստը կամ թիմի ղեկավարը՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում:

9) թիմի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ լիազորություններ:

VII Թիմի գործունեության դադարումը

17. Թիմի գործունեությունը դադարում է ՀՀ Արարատի մարզպետի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 87

<19> 11 2012թ.

ք. Արտաշատ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 1368-Ն որոշման պահանջներով

Որոշումեմ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012թվականի նոյեմբերի 1-ի <<Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումար հատկացմելու մասին>>թիվ 1368-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածով Արարատի մարզպետարանին 2012թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության Կառավարության պահուստային ֆոնդից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, <<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով հատկացված 16032.0 հազար դրամ գումարը սահմանված կարգով հատկացնել Արարատի մարզի մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2012թ. նոյեմբերի 19 N 87
որոշման

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ

1	Բաղրամյանի միջն. դպրոց	770,3
2	Նորաշենի միջն. դպրոց	962,9
3	Շահումյանի միջն. դպրոց	1444,3
4	Քաղցրաշենի միջն. դպրոց	962,9
5	ք. Արարատ թիվ 1 հիմն. դպրոց	1877,6
6	ք. Արարատ թիվ 4 հիմն. դպրոց	1636,9
7	գ. Արարատ թիվ 2 միջն. դպրոց	1396,2
8	Ավշարի միջն. դպրոց	1348
9	Մարմարաշենի միջն. դպրոց	1829,5
10	Նոր Խարբերդ թիվ 1 միջն. դպրոց	1396,2
11	Նոր Խարբերդ թիվ 2 միջն. դպրոց	2407,2

Աշխատակազմի ղեկավար՝ Ա.Վարդանյան